ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԳՄՍՆ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը ՆԶՊ առարկայի դասավանդման ընթացքում

Անցկացման վայր՝ Վարդենիս

Աշխատանքի Ղեկավար՝ Հասմիկ Բեյբությանն

Ուսուցիչ՝ Մկրտչյան Գրիգոր Գուրգենի

Առարկա՝ ՆԶՊ

Դպրոց՝ Տրետուք գյուղի միջնակարգ դպրոց

Վարդենիս 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

2.ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 6

3. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՆՁՊ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 13

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 27

5.ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 28

6.ԴԱՍԻ ՊԼԱՆ 30

«Հաղթում է այն կողմը, որը վստահ է ո՛չ թե իր սպառազեն բռունցքի, այլ ներքին գերազանցությանը»

Գարեգին Նժդեհ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը ներկայիս հրատապ խնդիրներից մեկն է: Դա բարոյական եւ հայրենասիրական կրթություն է, որը ամբողջ հանրային գիտակցության հիմնական բաղադրիչն է,որտեղ յուրաքանչյուր պետության կենսունակության հիմքը հիմնված է: Հայրենասիրական բնույթի զգացմունքները դրված են ողջ կյանքի եւ մարդկության առկայության վրա՝որոշակի սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցության ներքո: Երեխաների դաստիարակությունը պետք է իրականացվի անընդհատ, դասարանում, գործողություններում, նույնիսկ խաղի մեջ և տանը: «Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում՝ ի շահ Հայրենիքի բարօրության»:

Ժամանակի մարտահրավերներին համարժեք պատասխան տալու համար, պետությունն առաջին հերթին պետք է հենվի լավ կրթության վրա, քանի որ վերջինս՝ օժտված ներքին ազատությամբ, մեծահոգությամբ, անձնվիրությամբ, հայրենասիրությամբ ու բարոյական արժեքներով, պետք է ձևավորի ստեղծագործող անհատ: Անժխտելի է, որ հայրենասիրությունը հանդիսանում է ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիալական հանրույթի, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչը, իսկ հասարակության և պետության դիալեկտիկական գոյատևումն անհնար է պատկերացնել առանց այդ իսկ կառույցների միասնության, ամբողջականության, դինամիկ ու բարեհաջող զարգացման կարևորագույն պայման՝ հայրենասիրության: Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր ու նյութական մշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով պայմանավորված կյանքի ընթացքով, հայ էթնոսի արիական, աշխարհաստեղծ մենթալիտետով, ազգային ինքնագիտակցությամբ, ի վերուստ տրված հարատևման անհրաժեշտությամբ: Հայրենասիրության օբյեկտը միանշանակ թանձրացված Հայրենիքն է իր ամբողջ էությամբ ու բովանդակությամբ: Հայրենասիրության սուբյեկտի դերում հանդես են գալիս սոցիալական կառույցները՝ անձը, սոցիալական հանրույթը, դասակարգը, ազգը և այլն: Ռազմահայրենասիրական դաստիարակության առաջին քայլերն անհրաժեշտ է սկսել դեռևս նախադպրոցական տարիներին, իսկ առավել գիտակցված և կայուն գի տելիքներ պետք է տան դպրոցը և բուհը:

Մեր պետության ան զարգացման ողջ ընթացքում աճող սերնդի ռազմահայրենասիրա- կան դաստիարակության նկատմամբ հոգատարությունը գրավել է առաջնային տեղ: Երիտասարդության գաղափարական դաստիարակության բաղադրիչներից է ռազմահայրենասիրական դաստիարակությունը : Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է, երկրի պաշտպանունակության հետագա ամրապնդման, ազգային բանակի մարտունակության բարձրացմամբ: Բանակ հասարակություն ուն փոխադարձ կապի ամրապնդման գործում նշանակալի դերակատարություն ուն ունեն մեր հանրապետություն ունում գործող հասարակական և պետական կազմակերպությունները ...

Իզուր չէ ասված «Այ նտեղ, որտեղ բանակն ու ժողովուդը միասնական են, այնտեղ հայրենիքն անպարտելի է»...Թեկուզ տարբեր ծանրություն ունեն մեր պարտականությունները, սակայն պատասխանատվության առումով բոլորս հավասար ենք, որովհետև այն առաջին հերթին վերաբերում է հայրենիքի անվտանգության անը: Իսկ սրանք սոսկ բառեր չեն, այլ գործողության ուղենիշ, որի շնորհիվ մեծ առաջընթաց է նկատվել բանակ հասարակություն կապի ամրապնդման բնագավառում: Ձինվորական դաստիարակության կողմերից մեկն էլ հայրենասիրական դաստիարակություն ունն է, որի կարևոր օղակներնն են ընտանիքը, հանրակրթական դպրոցները, բուհերը և այլն :Աճող սերնդի դաստիարակություն ունը ընտանիքում և դպրոցում ունի ընդհանուր շատ կողմեր: Ընդհանուրն այ ն է, որ դաստիրակչական գործընթացը մեթոդաբանական մեկ հիմք ունի: Հայրենասիրական դաստիարակությունը և՛ դպրոցում, և՛ ընտանիքում ուղեկցվում էհայրենիքի նկատմամբ սիրո, նվիրվածության ձևավորմամբ, հոգևոր և նյութական արժեքների ճանաչմամբ ու գնահատմամբ: Ընտանեկան դաստիարակությունը հայրենասիրական գիտելիքների ձևավորման նախնական աստիճանն է: Ընտանիքում երեխաների հայրենասիրական դաստիարակության առավել

արդյունավետ ձևերից կարելի է նշել հետևյալ ները՝ ընտանեկան լ ուսանկարների, նամակների միջոցով, երեխաների մեջ սերմանել սեր առ հայրենիքը: Ընտանիքի անդամների հետ կազմակերպել , արշավներ, էքսկուրսիաներ, այցելություն ուներ մարտական և փառքի հուշարձաններ, թանգարաններ, ցուցահանդեսներ, ռազմական զորահանդեսներ) ընտանիքի ավագների, ծնողների միջամտություն ունը երեխաների դպրոցական, արտադպրոցական ռազմահայրենասիրական միջոցառումներին ընտանիքում հիմնել հայրենասիրական ուղղվածության գրադարան, այցելել գեղարվեստական ցուցահանդեսներ,երեխաներին օգնել ՝ կազմելու հայրենասիրական ցուցահանդեսներ: Աճող սերնդի հայրենասիրական դաստիարակության համակարգի հաջորդ օղակը հանրակարթական դպրոցն է:

Դպրոցականների հայրենասիրական դաստիարակության գիտակցության ձևավորման կարևոր նախադրյալները հուշում են, որ յուրաքանչյուր ուսումնական առարկա պետք է բովանդակի աշխարհայացքային և բարոյական գաղափարներ:

Գրական Ակնարկ

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են ՝ հավատն ու սերը:Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ բանի դեռ ապրում են՝ հավատում են, բանի դեռ հավատում են՝ ապրում են:Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Այն բաղկացած է մի բանի մակարդակներից: Այլասիրությունը ուրիշին սիրելու, իսկ եսասիրությունը սեփական անձը սիրելու երևույթն է:Նաև կան սիրո առանձնացված դրսևորումներ:Օրինակ սերը անհավասարների միջև, երբ միայն տալիս ես՝ առանց վերադարձի ակնկալիքի: Սիրո այդ ձևն անվանում են մայրական:Հաջորդը սերն է հավասարների միջև, երբ ինչքան տալիս, նույնքան ստանում ես: Օրինակ՝ եղբայրական սերը:Սերն անհատական ընտրողական զգացում է, որը դրսևորվում է խորը և կայուն ապրումներում: Ըստ Հեգելի՝ սիրո ճշմարիտ էությունն այն է, որ հրաժարվես ինքդ քեզ գիտակցելուց, մոռանաս քեզ ուրիշի <<Ես>>-ի մեջ և այնուամենայնիվ , այդ կորսվածության ու մոռացվածության մեջ առաջին անգամ գտնես և տիրապետես քեզ:Սերն ապրում է, որն ըստ Հեգելի չի հենվում խորհրդածությունների և դատողականության վրա, այլ բխում է զգացմունքից: Սերը խիստ անհատական և անկրկնելի ապրում է:Ամեն մեկը յուրովի է սիրում: Սիրո մեջ մարդն ավելի պահանջկոտ է դառնում ինքն իր նկատմամբ, ձգտում ինքնակատարելագործման:Ահա թե ինչու սերը մշակութային և գեղեցիկ երևույթ է:Հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Բարու, գեղեցիկի, արդարի միասնության սկզբունքը գալիս է Սոկրատեսից,ով փիլիսոփայական գիտելիքը բաժանում է տեսականի(որի կրողը նա համարում է ճշմարիտը),գործնականի (բարին),գեղարվեստականի (գեղեցիկը):Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ-մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն, իսկ գոյաբանական և իմացաբանական իմաստներով ըմբռնված ճշմարտությունը արժեքաբանորեն չեզոք են: Կյանքում հաճախ ճշմարտությունը զուգաբերվում է արժեքներին: Եթե

Արիստոտելն առաջնորդվում էր <<թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է>> սկզբունքով, ապա շատերն առաջնորդվում են << թեև ճշմարտությունը թանկ է, բայցԱրժեքները բավարարում են սուբյեկտի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Սուբյեկտի արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը:

Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցությանը տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների բանահյուսության մեջ: Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ հանրության մեջ բնականոն գործելու համար: Այսպիսով անհրաժեշտ է տարբերակել արժեք-միջոց և արժեք-նպատակ հասկացողությունները: Օրինակ <<իշխանությունը>>, մի բան է որպես միջոց, մեկ այլ բան որպես՝ նպատակ, նմանապես փողը և փառքը: Երբ իշխանությունը, փողն ու փառքը դառնում են անձի գերագույն արժեք, դա հիվանդագին և ախտածին երևույթ է, մինչդեռ որպես միջոց դրանք համարվում են կյանքի ընդունելի ու անհրաժեշտ տարրեր:Առանձնացնենք նաև արժեք-արժանիքները, որոնք անձի համար ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիք են, այլ նաև ցանկալի հատկություն: Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է <<անհատ-ազգ>> փոխհարաբերությունների կարգավորման առումով: Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները, մասնավորապես <<հաստատակամություն>>, <<աշխատասիրություն>>, <<համբերատարություն>> և այլն: Պետք է տարբերակել ազգային արժանիքներ հասկացողությունը, որում առանձնանում է ազգային-պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքներ՝ արժանապատվություն, արդարամտություն, աշխատասիրություն:Արժանապատվությունը սեփական <<Ես>>-ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է, անձի ինքնագնահատականը:Ազգային արժանապատվությունը սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ:Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա:Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է: Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է: Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է որևէ էական խնդրի

առաջացման:Այսպիսով պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է: Այն անհատներն ու ազգերը, որոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները վրա է հասնում ոգու սովը:Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝ մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին.

Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային,ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելովբազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ

յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական,խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով:
Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի
մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և
այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի

վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամ-
ները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող
է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բա-
ցասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի
արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի
անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաս-
տիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն
վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները
բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝
ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ
օրինաչափութ- յուն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է,
դրա համար էլ այնկարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի
դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացիբովանդակությունը, որովհետև ընտրելով
դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը
հնարավորու-
թյուն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջո-
ցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղա-
գիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական
ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ
նպատակի: Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն
ունեն ուսուցանվող օտար լեզուները: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր
արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների
նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր
պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ
ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր,
այլև բարոյական, գեղագիտական, ՛ռամահայրենասիրական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների
նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական,
դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի
դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ

գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման,նպատակին հասնելու,
գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը» : Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային,էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն)առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՆՋՊ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության առարկայի ու ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն է պատրաստել Հայրենիքը պաշտպանելու պատրաստ, բազմակողմանի զարգացած պատանիներ, հնարավորություն ընձեռել պատանիներին բանակ զորակոչվելուց հետո կարճ ժամանակում տիրապետել ժամանակակից զենքին ու ռազմական տեխնիկային:
Նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության առարկայի ծրագիրը մշակվել է առարկայական չափորոշիչներին համապատասխան: Ծրագրի առանձին բաժինները՝ լինելով իրարից բավականին անկախ, ուսուցման ընթացքում թույլ են տալիս կատարել թեմաների ուսուցման հերթականության փոփոխություններ՝ կախված տվյալ դպրոցի ուսումնական բազայի վիճակից, դպրոցի տեղակայման վայրից՝ քաղաքում, թե գյուղում, լեռնային, թե հարթավայրային
շրջանում, շեֆ զորամասի հեռավորությունից, օրվա և տարվա եղանակից:

Սակայն, առարկայի բաժինները լինելով իրարից անկախ, նրանց ուսուցման վերջնական արդյունքում սովորողների մեջ ձևավորում են ապագա զինվորի համար անհրաժեշտ ռազմագիտական նվազագույն

գիտելիքներ, բարոյահոգեբանական հատկանիշներ, կամային հատկություններ, հայրենիքին ծառայելու ցանկություն: Նշված արժեքային համակարգի ձևավորման համար յուրաքանչյուր թեմայում նշված են կրթական հիմնական խնդիրները /նպատակը/, սովորողների համար ակնկալվող գիտելիքները, կարողություններն ու հմտությունն

Ռազմահայրենասիրական դաստիարակության ուսուցման մեթոդները

Ռազմահայրենասիրական դաստիարակության նյութի վերլուծության ժամանակ օգտագործում ենք ուսուցման տարբեր մեթոդներ, մասնավորապես՝ բանավոր շարադրանք, զրույց, վարժություններ /մարզումներ/, ինքնուրույն աշխատանք:

Բանավոր շարադրանք

Դասախոսությունը շարադրվող նյութի գիտա-տեսական վերլուծության ծավալուն հաղորդումն է: Դասախոսության հիմնական նպատակն է օգնել սովորողներին, նրանց հետագա ստեղծագործական աշխատանքին: Դասախոսության մեջ շարադրվում են թեմայի առավել բարդ դրույթները, վերլուծվում են գրական աղբյուրները, տրվում են խորհուրդներ հետագայում նպատակասլաց թեմայի հետ աշխատելու համար: Դասախոսություններում լայնորեն կիրառվում են ընդհանրացումներ, նկարագրություններ, օրինակներ, փաստերի վերլուծություններ:

Բացատրությունները դրանք երևույթների իմաստնե իբացահայտումն են: Դրանցում մեծ տեղ ունեն ապացույցները, հետևությունները, դատողությունները: Բացատրություններն ուղեկցվում են սպառազինության ու տեխնիկայի ցուցադրմամբ,դիդակտիկ պարագաների, գործողությունների ու հնարքների ցուցադրմամբ:

Պատմումը ուսումնական նյութի կարճ ու պատկերավոր շարադրումն է, առավելապես փաստացի տվյալների հիման վրա: Պատմելու ընթացքում կիրառվում են նկարագրության, դատողությունների, եզրահանգումների ձևերը: Սովորաբար տևողությունը լինում է 20-30 րոպեից ոչ ավել, ուղեկցվում է բացատրություններով, դիդակտիկ նյութերի ցուցադրումով:

Զրույցը սովորողներին նոր գիտելիքներով հարստացնելու պարզ ու մատչելի մեթոդներից է: Այն հնարավորություն է ընձեռնում ուսումնական նյութի ինքնարկման համար, թույլ է տալիս ստուգել նախկինում ձեռք բերած գիտելիքները, դրանք սիստեմավորել և խորացնել: Ուսուցման նպատակից կախված զրույցը կարող է լինել ծավալուն, ստուգողական, նոր գիտելիքների հաղորդման: Այն պետք է նախօրոք նախապատրաստել, որոշել նպատակը, խնդիրները բովանդակությունը:

Վարժությունները /մարզումներ/ գիտակցաբար, աստիճանաբար դժվարացող

որոշակի գործողությունների, հնարքների կրկնությունն է, սովորողների մոտ հմտություններ և ունակություններ ձեռք բերելու նպատակով: Վարժություններ կատարելիս սովորողները ձեռք են բերում գործնական ունակություններ գենի, սպառազինության, մարտական տեխնիկայի հետ վերաբերվելու: Գործնական աշխատանքը տեխնիկայի, սպառազինության, զենքի հետ վարվելու, սպասարկելու, խնամելու և պահպանելու կոնկրետ և կարևոր աշխատանք է: Ինքնուրույն աշխատանքը ուղեկցվում է հրահանգների, ուղեցույցների, տեղեկատու գրականության կրկնությամբ: Ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը մեծ չափով կախված է զինվորի կողմից այն նախապատրաստելու մակարդակից, դրված խնդիրների ծավալից և նրա կողմից իրականացվող հսկողությունից: Գործնականում ավելի հաճախ օգտագործվում են ուսուցման մեթոդները զուգորդված, որի ժամանակ կիրառվում են մի քանի մեթոդներ:

Աշխարհաքաղաքական ժամանակակից զարգացումների ֆոնին, էթնիկական ու կրոնական, միջազգայինահաբեկչության սպառնալիքների պայմաններում առաջնային դերակատարում է ստանձնում հայրենասիրության էությունն ու բնույթը, ըստ այդմ, կկարողանանք մեկնաբանելուազգմահայրենասիրական դաստիարակության նշանակությունը: Բնականաբար, տրամաբանական կլինի գիտականորեն հիմնավորված ձևերի ու միջոցների ընտրությունը: ...Բարոյական գիտակցության դրսևորման զգայական աստիճանի արտացոլման ձևերից մեկն է հասարակական ապրումների զգացմունքների խումբը:

Վերջինիս էությունները արտացոլող արժեքներից է նաև հայրենասիրությունը: Այն՝որպես կատեգորիա, արտացոլում է հասարակությունում տիրող, ինչպես նաև ազգային հոգևոր բարոյական մթնոլորտը: Անժխտելի է , որ հայրենասիությունը հանդիսանում է ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիալական հանրույթի, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչը, իսկ հասարակության և պետության դիահելեկտիկական գոյատևումն անհնար է պատկերացնել առանց այդ իսկ կառույցների միասնության, ամբողջականության, դինամիկ ու բարեհաջող զարգացման կարևորագույն պայման հայրենասիության : Վերջինս բնութագրվում է որպես բարդ, բովանդակային առումով բազմաբաղադրիչ երևույթ, որն ունի զարգացման տարբեր փուլեր և մակարդակներ:Դրսևորումներ, որոնք ակնառու են դառնում հասարակական կյանքի բոլոր կարևորագույն ոլորտներում ու ամենատարբեր ձևերով:

Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները պայմանավորված ազգային էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ,

հոգևոր ու նյութական մշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով պայմանավորված կյանքի ընթացքով, հայէթնոսի արիական, աշխարհաստեղծ մենթալիտետով, ազգային ինքնագիտակցությամբ, ի վերուստ տրված հարատևման անհրաժեշտությամբ: Հայրենասիրության դրսևորման բարձր մակարդակի հասնելն ու դրա պահպանելը բավականին բարդ ու շատ աշխատատար գործընթացներով խնդիր է: Ելնելով շարադրվածից՝ փորձենք հասկանալ հայրենասիրության տեղնու դերը,դրա էությունը անհատի, հասարակության ու պետության կյանքում:

Այստեղ փորձենք պարզաբանել մի քանի ելակետային դրույթներ: Հայրենասիրությունը ձևավորվում և զարգանում է որպես հոգևորբարոյական հաստատմամբ առավել սոցիալիզացված զգացմունք, Հայրենասիրությունը՝ որպես իր բնույթով խորապես սոցիալական երևույթ, իրենից ներկայացնում է ոչ միայն հասարակական կյանքի որոշակի կողմ, այլ դրա գոյության և զարգացման էական աղբյուր, Հայրենասիրության առաջնահերթ սուբյեկտ է հանդիսանում անհատը, ում գերակա սոցիալ բարոյական խնդիրն է իր հայրենիքին, պատմական մշակութային, ազգային և հոգևոր պատակնելիության գիտակցումը՝ որպես կյանքի իմաստն ու բովանդակությունը որոշող բարձրագույն սկզբունք. Հայրենասիրության իմաստը դրա հոգևոր արժեքայնության մեջ է: Այն որպես վեհ զգացմունք, անփոխարինելի արժեք է, անսպառ աղբյուր:

Շարադրվածի յուրատեսակ թանձրացումն է Նժդեհի իմաստասիրական ըմբռնումն առ այն, որ <Այո՛, հայրենիքը՝ ընդհանուր աստվածություն, հայրենասիրություն,

կրոն է>: Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարկական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականություն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում է իքնառեալիզացման ակտիվ գործընթացում ի շահ հայրենիքի բարօրության

Անտարակույս, հայրենասիությունը որոշակի առումով հանդես է գալիս որպես հասարակական ու պետական վերնաշենքի ինքնատիպ հիմք, գաղափարական հենարան:Այստեղից էլ այն համոզմունքը,որ հայրենասիրությունը չի կարող վերացական կերպով հանդես գալ, այսինքն լինել օբեյկտից ու սուբեյկտից դուրս:

Արցախյան պատերազմի հերոսների, ռազմական մարտերի մասին ականատեսների վկայություն հիշողություններ. սովորողները ճանաչում են արցախյան պատերազմի հերոսներին, ծանոթանում են ռազմական մարտերի մասնակիցների վերապրած հիշողություններին, էքսկուրսիաների, արշավների իրականացում. երեխաները ճանաչում են հայրենի բնաշխարհը, սիրում հայրենի հողը, մասնակցություն ազգային տոներին. սովորողները ճանաչում են ազգային տոները, անձամբ մասնակցում տոնակատարություններին, զրույց, դասախոսություն, բանավեճ. աշակերտները փոխանակում են

հայրենասիրական գաղափարներ,հարստացնում են հայրենիքի մասին ունեցած գիտելիքները, բանավեճի արդյունքում կատարում եզրահանգումներ, արցախյան թեմաներով կինոդիտում. փաստավավերագրական ֆիլմերի օգնությամբ աշակերտները ծանոթանում են պատմական փաստերին, հայրենասիրական թեմաներով ցերեկույթներ, վիկտորինաներ. սովորողներն անձամբ մասնակցում են միջոցառումների կազմակերպմանն ու ներկայացմանը. ապահովվում է առողջ մրցակցություն:

Սովորողի հայրենասիրական դաստիարակության առաջին փուլում կարևորվում է աշակերտների՝ հայրենիքի մասին ունեցած պատկերացումների ձևավորումն ու ամբողջացումը: Փոքրածավալ նյութերի ընթերցման ճանապարհով խնդիր է դրվում սովորողների մեջ ձևավորել հայեցի դաստիարակություն, ազգային հոգեկերտվածք՝ նպաստելով երեխայի ինքնահաստատմանն ու ինքնադրսևորմանը, և ամենևին էլ պատահական չէ, որ կրտսեր դպրոցում աշակերտի հայրենասիրական պատկերացումների ստեղծումը խարսխվում է հայրենիքի նվաճումների հանդեպ աշակերտի հպարտության գիտակցման վրա, որը դառնում է հայրենասիրության հիմքը:

Հանրակրթության 2-րդ աստիճանում հիմնական դպրոցի սովորողների հայրենասիրական մտածողության զարգացման համար ի նպաստ են դրվում ուսումնական տարբեր բնագավառների ընձեռած հնարավորությունները: Գրականությունը և պատմությունը կյանքի դասեր են ուսուցանում սովորողներին, զարգացնում նրանց ստեղծագործական, վերլուծական ակտիվությունը և դաստիարակում ինքնատիպ անհատականություններ: Իսկ մյուս ուսումնական առարկաները (<ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն>, <Աշխարհագրություն>, ՏՀՏ և այլն) ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման համատեքստում հարուստ նյութ են տալիս ինտեգրված դասեր անցկացնելու համար:

«ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությամբ» սահմանված է, որ «Հասարակության և անհատի բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի ընտանիքում և շարունակվի կրթության բոլոր մակարդակներում»: Որպես օրենսդրական հիմք՝ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպումը ներառում է «հայրենասիրական դաստիարակության ապահովումը, ռազմամարզական բնույթի

Միջոցառումների կազմակերպմամբ բնակչության շրջանում առողջ ապրելակերպի խթանումը»:

Պետության դեմ ուղղված մարտահրավերներն ու սպառնալիքները առաջադրել են հանրության համախմբման, միասնական դաշտի ձևավորման կենսական խնդիր, որի լուծումն անհնար է առանց հայրենասիրական գաղափարաբանության՝ քաղաքացիներին իրար հոգեպես ու գիտակցորեն

շաղկապող, նրանց ավանդական նկարագրից բխող նպատակները, վարքը և գործունեությունը սահմանող գաղափարների ու արժեքների համակարգի: Որպես արժեք՝ հայրենասիրությունը բազմաբովանդակ է՝ հասարակական ապրումների խմբում բարոյական գիտակցության դրսևորման զգայական աստիճանի արտացոլման ձևերից մեկը: Որպես կարգախումբ՝ այն արտացոլում է հասարակության մեջ տիրող, ինչպես նաև ազգային-էթնիկական հոգևոր-բարոյական մթնոլորտը: Անժխտելի է, որ հայրենասիրությունը ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, հանրության, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչն է, իսկ հասարակության և պետության դիալեկտիկական գոյատևումն անհնար է պատկերացնել առանց այդ կառույցների միասնության:

Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային-էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր ու նյութական մշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով ուղղորդվող կյանքի ընթացքով, հայ էթնոսի արիական, աշխարհաստեղծ մտածելակերպով, ազգային ինքնագիտակցությամբ, հարատևման ի վերուստ տրված հրամայականով: Հայրենասիրության բարձր մակարդակի դրսևորման հասնելն ու պահպանելը բավական բարդ ու աշխատատար գործընթացների առնչվող խնդիր է: Ելնելով շարադրվածից՝ փորձենք հասկանալ հայրենասիրական դաստիարակության և հայրենասիրության էությունը, տեղն ու դերը անհատի, հասարակության ու պետության կյանքում. Հայրենասիրական դաստիարակությունը պետական իշխանության մարմինների, հասարակական կառույցների նպատակամղված և համակարգված գործունեությունն է՝ ուղղված քաղաքացիների շրջանում բարձր հայրենասիրության ինքնագիտակցմանը, Հայրենիքին հավատարմության զգացումի ձևավորման և Հայրենիքի պաշտպանության քաղաքացիական ու սահմանադրական պարտքի կատարման պատրաստակամության գիտակցմանը: Հայրենասիրությունը ձևավորվում և զարգանում է որպես հոգևոր-բարոյականի հաստատմամբ առավել սոցիալականացված զգացմունք: Այն՝ որպես իր բնույթով խորապես սոցիալական երևույթ, ոչ միայն հասարակական կյանքի որոշակի կողմ է, այլև դրա գոյության և զարգացման էական աղբյուր:

Հայրենասիրության առաջնահերթ սուբյեկտը անհատն է, որի գերակա սոցիալ-բարոյական խնդիրն է իր հայրենիքին պատմական, մշակութային, ազգային և հոգևոր պատկանելության գիտակցումը՝ որպես կյանքի իմաստն ու բովանդակությունը որոշող բարձրագույն սկզբունք: Հայրենասիրության իմաստը հոգևոր արժեքայնության մեջ է: Այն՝ որպես վեհ զգացմունք, անփոխարինելի արժեք է, անսպառ աղբյուր:

Ընդհանրացնելով այս մտքերը՝ կարող ենք ասել, որ հայրենասիրությունը հասարակական կյանքի և

պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների մի համակարգ է, որը անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն է ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը՝ դրսևորվելով ինքնահիրացման ակտիվ գործընթացում, որ ծավալվում է ի շահ Հայրենիքի բարօրության:

Հայրենասիրության օբյեկտը միանշանակ թանձրացված հայրենիքն է իր ամբողջ էությամբ ու բովանդակությամբ : Հայրենասիրության սուբյեկտի դերում հանդես են գալիս սոցիալական կառույցները՝ անձը, սոցիալական հանրույթը , դասակարգը, ազգը և այլն: Այստեղ երևան է գալիս հայրենասիրությունն ու սուբյեկտը մեկ հարթության բերող և իրար շաղկապող գործառույթի անհրաժեշտությունը հայրենասիրական,մասնավորապես՝ռազմահայրենասիրական դաստիարակություն անվամբ:

Ժամանակակից հասարակության մեջ երիտասարդության հայրենասիրական դստիարակությունն առանձնակի կարևորություն է ձեռք բերում մի քանի պատճառներով բարձրանում է նոր սերնդի տեղեկացվածության մակարդակը,ժողովրդավարացման գործընթացները և քաղաքական կյանքում բազմակուսակցական համակարգի գոյությունը որոշակի դժվարություններ են ստեղծում՝ ըմբռնելու հայրենասիրության էությունը:Անհրաժեշտություն է առաջանում երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն իրականացնել որակապես նոր մակարդակով: Աճող սերնդի դաստիարակության գործում հանրակրթական դպրոցն առաջատար դեր է խաղում, ահա թե ինչու մանկավարժական կադրերի պատրաստման և կատարելագործման հարցերը ներկայումս առանձնակի հրատապություն են ձեռք բերում :Ժամանակակից ուսուցիչն ներկայացվող սոցիալական պատվերը ուսումնադաստիարակչական գործընթացը որակապես նոր մակարդակի բարձրացնելն է:

Դաս-միջոցառումների և համագործակցային դասերի միջոցով աշակերտների մեջ սերմանել հայոց բանակի անպարտելիության գաղափարը, ծանոթացնել քրիստոնեական արժեքներին, հայ ժողովրդի պատմության փառահեղ էջերին, հզոր թագավորների, սպարապետների, ազգային-ազատագրական պայքարի գործիչների կերպարներին՝ կարևորելով հայրենապաշտ անհատի կերտումը նրանց օրինակով, ինչը կնպաստի սովորողների բարոյահոգեբանական և ռազմահայրենասիրական ոգու բարձրացմանը:

Նոր հնարավորություն սովորողների համար ոչ միայն ձեռք բերելու նոր գիտելիքներ, այլև զարգացնելու տարաբնույթ սոցիալական հմտություններ և կարողություններ: Շփումը բարձրաստիճան զինվորականության, հայրենիքին մարտական ծառայություն մատուցած անհատների, ժամկետային զինծառայողների, պատերազմի մասնակից մեր դպրոցի սաների հետ, թեմատիկ փաստավավերագրական ֆիլմերի դիտումը և քննարկումները սովորողների մոտ կզարգացնեն միմյանց հետ գրագետ համագործակցելու և շփվելու կարողություններ, դժվարին

իրավիճակներում որոշումներ կայացնելու, համոզելու, լսելու, հոգատարություն ցուցաբերելու և այլ հմտություններ:

Միջառարկայական կապերի միջոցով ամրապնդել «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից ստացած գիտելիքները և դրանց համապատասխան կարողություններն ու հմտությունները, զարգացնել և նպաստել ազգային գաղափարախոսության, մշակույթի և հայոց բանակի առաքելության ընկալումը:

Ռազմահայրենասիրական միջոցառումների կազմակերպում, փաստավավերագրական ֆիլմերի դիտում-քննարկում:

Սերտ համագործակցություն ՀՀ ՊՆ զորամասերի հետ:

մասնակցություն զորամասերում անցկացվող հրամանատարական վարժանքներին, զորավարժություններին, դաշտային երթերի, արշավների կազմակերպում:Համագործակցային դասերի միջոցով միջառարկայական կապերի ստեղծում

(«ՆԶՊ»-«Հայոց պատմություն»- «Գրականություն»):

«Հայ ժողովրդի պատմություն» և «Գրականություն» առարկայի թեմատիկ դասերը (նախապես ընտրված թեմաներին համապատասխան) անցկացվում են ռազմագիտության դասարանում՝ ՆԶՊ առարկայի հետ համատեղ: Դասերը վարում են պատմության կամ գրականության և ՆԶՊ առարկաների ուսուցիչները միասին՝ նոր ժամանակակից մեթոդների և նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ: Հայրենասիրությունը բարդ երևույթ է. Նրա էությունը կապվում է ոչ միայն առանձին քաղաքական կամ բարոյական սկզբունքի, այլև նրա առանձնահատկությունների ինտեգրատիվության հետ, ինչը թույլ է տալիս հայրենասիությունը դիտարկել որպես անձի սոցիալ- բարոյական ուղղվածության անբաժանելի մաս: Հայրենասիրության կառուցվածքում առանձնանում են մի քանի փոխկապակցված բաղադրատարրեր՝ մտավոր, պահանջմունքաշարժառիթային հուզակամային և գործնական:

Մեր երկրում տեղի ունեցող արմատական վերափոխումներն իրենց հետքն են թողնում հասարակության կյանքի տարբեր ոլորտների, այդ թվում՝ երիտասարդ սերնդի վրա , ինչը պայմանավորվում է ժամանակակից պայմաններում հայրենասիրության բովանդակության առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտությունը:

Ժամանակակից պայմաններում հայրենասիրության բովանդակության կարևոր առանձնահատկությունն է նրա միտվածությունը դեպի ապագան: Իր հայրենիքին նվիրված մարդն անմիջականորեն մասնակցում է նրա առջև ծառացած խնդիրների լուծմանը; Տնտեսության վերելքը ժողովրդավարական պետության կայացումը ուղղակիորեն կախված են հասարակության անդամի՝ իր հայրենասիրական պարտքի կատարումից, որն իրականացվում է ոչ միայն հերոսական արարքների միջոցով այլ նաև ամենօրյա գործերով: Դա պայմանավորվում է ժամանակակից հայրենասիրության ևս մեկ առանձնահատկությամբ. Իսկական հարենասիրությունն անանց բնույթ ունի և դասվում է համամարդկային արժեքների շարքը: Հայրենասիրական դաստիարակությունը մեր կողմից դիտվում է որպես դաստիարակների և սանների փոխգործակցության գործընթաց, որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների ձևավորմանը հայրենասիրական համոզմունքների և վարքագծի մշակմանը: Հայրենասիրական դաստիարակության նպատակն ու արդյունքը հայրենասիրության ձևավորումն ու զարգացումն է: Ընդ որում՝ էական է հասարակական փորձի փոխանցումը սերնդին՝ որպես անձնական ձեռքբերում, ինչն արտացոլում է դաստիարակության գործընթացի էությունը՝ արտաքինի, օբյեկտիվ փոխադրումը ներքին, սուբյեկտիվ աշխարհ:

Հայրենասիրական դաստիարակությունն իրականացվում է դաստիարակչական աշխատանքի միյուս ուղությունների հետ միասին այն փոխկապակցված է քաղաքացիական դաստիարակության հետ, սակայն, մեր կարծիքով առավել նպատակահարմար է հայրենասրիական դաստիարակությունը դիտել ոչ թե որպեսվերջինիս մաս այլ որպես դաստիարակչական աշխատանքի ինքնուրույն ուղղություն: Ապագա ուսուցիչների նախապատրաստման նպատակն է հանդիսանում սովորողների հայրենասիրական դաստիարակության իրականացմանը ուսանողների պատրաստականության ձևավորումը , որը դրսևորվում է գործունեության տվյալ տեսակի նկատմամբ ունեցած ձգտմամբ և տվյալ գործունեության տիրապետմամբ: Պատրաստականությունը ներառում է երկու կողմ՝ բարոյահոգեբանական (բարոյահոգեբանական պատրաստվածություն)և արդյունավետ գործնական (տեսական և գործնական նախապատրաստվածություն):

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային–հասարակական կարևորության խնդիր,

որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:
առարկայական համագործակցային ծրագրի իրականացումը կնպաստի
«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից ստացած գիտելիքները գործնական ճանապարհով ամրապնդելուն,
դրանց համապատասխան կարողությունների և հմտությունների զարգացմանը,
կնպաստի սովորողների բարոյահոգեբանական և ռազմահայրենասիրական ոգու բարձրացմանը,
նրանց մոտ կզարգացնի միմյանց հետ գրագետ համագործակցելու և շփվելու կարողություններ,
դժվարին իրավիճակներում որոշումներ կայացնելու, համոզելու, լսելու, հոգատարություն ցուցաբերելու և այլ հմտություններ:Կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ եւ միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը:
Արժեքն երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման:
Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում:
Նորմերը տարբեր են քաղաքում եւ գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում:
Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը եւ չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայման: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է

խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը եւ տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ եւ այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա է՛ւ ցավ, է՛ւ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը եւ ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձեւավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը:

ՆԶՊ առարկայի դասավանդման ընթացքում,որպես կարևորագույն արժեք հայրենասիրությունն է,սեր ու հարգանք սերմանելն է ազգային բանակի,հայենիքի պաշտպան զինվորի և երկրի ժողովրդի նկատմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նման ծրագրային մոտեցումները հնարավորություն կընձեռեն հայրենասիրական դաստիարակության աշխատանքի շնորհիվ ունենալու

1. Համընդհանրացման պայմաններում ՀՀ քաղաքացու ազգային դիմագծի, ինքնության, լեզվի, մշակույթի ու ավանդույթների պահպանումը,

2. Պետության պաշտպանունակության, ազգային անվտանգության և ռազմական հզորության ամրապնդում և զարգացում,

3.Հայրենիքի պաշտպանությանն անմիջականորեն մասնակցելու համար պատասխանատվության ձևավորում,

4.Ազգային արժանապատվության, իր ընտանիքի, ազգի և պետության համար հպարտության զգացում, ինչպես նաև իր սահմանադրական և քաղաքացիական պարտքը կատարելու պատրաստակամություն,

5. Անող սերնդի հայրենասիրական դաստիարակության հիմնահարցը հրատապ է մարդկային հասարակության զարգացման բոլոր փուլերում,որպե կարևորագույն արժեք:

6՝ Ազգային գաղափարի ու բարոյական արժեհամակարգի ձևավորում: Հայոց բանակի դերի կարևորում և արժևորում:

7 ինտեգրված և համագործակցային դասերի, դաս-միջոցառումների արդյունքում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման որակի բարելավում:

Գրականության Ցանկ

1. Ջեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017, 191 էջ:
2. Վ.Ա.Մուրադյան «Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական դրույթները հանրակրթական դպրոցում» ԳՊՄԻ 2010թ.
3. Անդրեասյանհ.Պ . Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում: Երևան 1982 թ.
4. Այվազյան Ա . Մ . Հիմնատարրեր ազգային անվտանգության հայեցակարգի, 1-ին մաս: Երևան 2004 թ :ԱյվազյանԱ .Մ .Ազգային և ազգային-պետական գաղափարախոսություն: Երևան 2003թ.
5. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002թ,:
6. Մուդրիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում Երևան 1986
7. Նախնական զինվորական պատրաստություն առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր 8-12-րդ դասարաններ
8. Ջեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017, 191 էջ:
9. Վ.Ա.Մուրադյան «Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական դրույթները հանրակրթական դպրոցում» ԳՊՄԻ 2010թ.
10. Անդրեասյանհ.Պ . Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում: Երևան 1982 թ.

11. Այվազյան Ա . Մ . Հիմնատարրեր ազգային անվտանգության հայեցակարգի, 1-ին մաս: Երևան 2004 թ :ԱյվազյանԱ .Մ .Ազգային և ազգային-պետական գաղափարախոսություն: Երևան 2003թ.
12. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002թ,:
13. Ջեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017, 191 էջ:
14. Վ.Ա.Մուրադյան «Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական դրույթները հանրակրթական դպրոցում» ԳՊՄԻ 2010թ.
15. ԱնդրեասյանՀ.Պ . Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում: Երևան 1982 թ.
16. Այվազյան Ա . Մ . Հիմնատարրեր ազգային անվտանգության հայեցակարգի, 1-ին մաս: Երևան 2004 թ :ԱյվազյանԱ .Մ .Ազգային և ազգային-պետական գաղափարախոսություն: Երևան 2003թ.
17. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002թ,:
18. Մուդրիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում Երևան 1986
19. Նախնական զինվորական պատրաստություն առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր 8-12-րդ դասարաններ

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկա՝ Նախնական զինվորական պատրաստություն

Դասարան՝ 10-րդ	**Ուստարի 2022-2023**
Բաժին	**Ռազմարվեստի պատմություն**
Թեմա	**Հայկական բանակի ռազմավարությունն ու մարտավարությունը նոր դարաշրջանում**
Թեման	Քառօրյա պատերազմ
Բաժնի նպատակը	Գաղափար տալ ժամանակի ընթացքում փոփոխվող և կատարելագործվող զենքերի և զինատեսակների դեպքում ռազմարվեստի փոփոխությունների օրինաչափությունների մասին: Զարգացնել սովորողների որոնողական գործունեությունը, վերլուծական կարողությունները: Խթանել այլընտրանքային մտածողության զարգացումը: Ձևավորել ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու լուծումներ գտնելու կարողությունը: Սովորողների մեջ ձևավորել տարբեր իրավիճակները ճիշտ գնահատելու հմտություն:
Դասի նպատակը	Սովորողների միջոցով բացահայտել քառօրյա պատերազմում կիրառված զինեսակների ու զինատեսակների գոյության պայմաններում կիրառվող ռազմավարական և մարտավարատակտիկական հնարների անհրաժեշտությունը և առանձնահատկությունները:
Վերջնարդյունքներ	Արդյունքում սովորողը պետք է կարողանա՝ ● Ռեալ **գնահատել**, **վերլուծել** իրավիճակը ● **Որոնել** և **գտնել** մարտավարատակտիկական այն հնարները, որոնք կիրառվել են տվյալ ճակատամարտում ● **իրականացնել** մարտավարական հնարքը ● **Ստեղծել** մարտավարական հնարքներ
Ընդհանրական խաչվող հասկացությունները:	**Ռազմավարություն** Առաջացած պատերազմական իրավիճակի վերլուծում և գնահատում: **Մարտավարություն** Կոնկրետ ճակատամարտում իրավիճակի վերլուծում և գնահատում: **Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում**

	Յուրաքանչյուր որոշման և քայլի հիմքում գործող մեխանիզմների կիրառում: Մարտավարական իրավիճակներում պատճառահետևանքային կապերի վերհանման և վերլուծության հմտությունների ձևավորում:
Միջառարկայական կապերը:	**Հայոց լեզու** – Անվանումները կարդալու, մտապահելու, սեփական մտքերը գրագետ, տրամաբանված և համոզիչ արտահայտելու կարողություն: Նորի ստեղծում: **Մաթեմատիկա** - Խնդրի պայմանը և պահանջը բացահայտելու և լուծելու կարողություն: Խնդրի լուծման փուլերը պլանավորելու կարողություն: **Հայոց պատմություն** – առկա ռազմական գործողությունների իրականացման ժամանակաշրջանի վերաբերյալ ընհանրական պատկերացում ունենալու հնարավորություն:
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ:	Դասագիրք, քրտեզ, կոնկրետ ճակատամարտերի գծապատկերները նկարագրող ցուցապաստառներ:
Ուսուցման մեթոդներ:	Պրոբլեմահարույց մեթոդի միջոցով բացահայտել մարտավարատակտիկական հնարները: Զրույց, մտքերի տարափ, հարցադրումներ, բանավեճեր, դիտում, աշխատանք դասագրքով:
Գործողություններ և առաջադրանքեր	- Ներկայացված դասի ուսումնասիրություն և վերլուծություն: - Վերլուծական ռեֆերատի կազմում
Անցկացման վայրը	ՆԶՊ կաբինետ
Գնահատում	Իրականացվում է ձևավորող գնահատում:

Դասի ընթացքը

- Աշակերտների հաշվառում՝ 2 րոպե
- Նախորդ նյութի ամփոփում հարցերի միջոցով՝ 10 րոպե
- Ռազմավարական և մարտավարական հնարքների բացատրություն՝ 10 րոպե
- Նոր նյութի հաղորդում և ամրապնդում 20 րոպե
- Ամփոփում և գնահատում 3 րոպե

Աշակերտներին տրվող հնարավոր հարցերի օրինակներ, որոնք ներգավում են մեծ քանակով աշակերտների՝

- Ի՞նչ եք հասկանում ռազմավարություն ասելով:
- Ինչ տարբերություն ռազմավարություն և մարտավարություն հասկացությունների միջև:
- Ի՞նչպես են կարողացել հայրեը քիչ զորամիավորումներով հաղթել քանակով մի քանի անգամ գերազանցող հակառակորդին:
- Հայկական կողմը ինչպիսի՞ ռազմավարական և մարտավարական հնարներ է կիրառել, որ կարողացել են հաղթել:
- Ինչպե՞ս են օգտագործել հակառակորդի թույլ և ուժեղ կողմերը:
- Ինչպես օգտագործել ուժեղ կողմի առավելությունները: